

# Ժողովուրդ

26 սեպտեմբերի երեքշաբթի 2023  
տպագրության ԺԲ տարի

133  
(2799)

Է. Երեւան, Արմավյան 22ա/3 (0010) + 374 10 546423 @ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ՔՊ-ՈՒՄ ԽՈՒՃԱՊՆ ԱՆՑԵԼ Է




«Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները հայտնում են, որ վերջին օրերին ՔՊ-ականները ներքին քննարկումներ են ունեցել երկրում ստեղծված իրավիճակի, ընդդիմադիրների կազմակերպած հանրահավաքների և փողոցներ փակելու մասին: Ուժայինների գեկուցների հիման վրա արված իրավիճակի գնահատումից հետո ՔՊ-ականները հանդարտվել են, եւ խուճապ անցել է: ՀՀ ոստիկանությունից ՔՊ-ին գեկուցվել է, որ գնալով շարժումը մարում է: Ըստ ուժային կառույցների ներկայացրած վիճակագրության՝ շարժումը մարում է, քանի որ առաջնորդները հստակ գործողություններ չեն իրականացնում, ինչը դժգոհություն է առաջացնում մարդկանց մոտ: Սա է պատճառը, որ վերջին օրերին՝ մի քանի օրվա լռությունից հետո, ՔՊ-ական որոշ գործիչներ սկսել են հայտնվել ֆեյսբուքյան ստատուսների եւ հայտարարությունների մակարդակով: ՔՊ-ականները ոգետորվել են այդ լուրից եւ ընդդիմադիրներին թիրախավորում են քննադատում են այն բանի համար, որ իրենք, փողոցից գալով, հասել են իշխանության, իսկ ընդդիմադիրների կազմակերպած հավաքները ինչպես արագ կազմակերպվում են, նույնքան արագ էլ ցրվում են: Կարճ ասած, ՔՊ-ականները վստահ են, որ այս անգամ եւս ընդդիմությանը չհաջողվեց իշխանությունը վերցնել: Հիշեցնենք, որ այս նույն ՔՊ-ականները Երեւանի ավազանու ընտրություններին եւս վստահություն ունեին, որ 50%-+ ձայն կստանան, սակայն ստացան 32,57%, ու մինչ օրս Երեւանը Նոր քաղաքապետ չունի:

Համացանցում մեծ աղմուկ է բարձրացրել Հայոց լեզվի 5-րդ դասարանի դասագրքի կազմը: Նախկին դասագրքի կազմը փոփոխված է, եւ, Հայաստանի դրոշի փոխարեն, արդ-բեջանական դրոշի գույներով է պատկերված կազմը: ԿԳՄՍ Նախարարությունը շրջող խոսակցություններից հետո ներկայացրել է համապատասխան պարզաբանում՝ նշելով, որ դա ապատեղեկատվություն է: «Հանրակրթության Նոր չափորոշիչի ներդրմամբ պայմանավորված՝ ստեղծվել է «Մայրենի 5» Նոր դասագիրքը, որը գործածության մեջ է մտել 2023-2024 ուսումնական տարվանից: Նշված դասագիրքն արդեն տպագրվել է առաքվել է դպրոցներ: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Մայրենի 5» Նախկին դասագիրքը առաջին անգամ երաշխավորվել է 2006 թվականին, երկրորդ անգամ՝ 2011 թվականին, ՀՀ կրթության եւ գիտության նախարարության կողմից եւ մինչեւ 2023 թվականը, ըստ գործածության ժամկետների, պարբերաբար վերահրատարակվել է: Նշված դասագրքի կազմը՝ այլ գունային պատկերով, երբեմն չի երաշխավորվել դպրոցներում օգտագործելու համար: Համացանցում շրջանառվող լուրերը, թե Նախարարության կողմից երաշխավորվել է դասագիրք, որի կազմի վրա արդեթեանական դրոշի գույներն են, ապատեղեկատվություն են եւ աղերս չունեն իրականության հետ»: Կարծես թե, Մայրենիի դասագրքերի հետ թեման ավարտված է, սակայն ծնողներից շատերը բողոքում են նաեւ Մայրենիի Նոր դասագրքերի բովանդակությունից՝ նշելով, որ դրանք երեխաներին սովորեցնում են, որ «գոյնացի համար փեսայի տված խորտիկն ուտելը ծանր է»: Մեկ այլ առիթ է Հայոց պատմության Նոր դասագրքերը, որոնք աղավաղում են հայկական դեմքն ու հարցականի տակ դնում հայի ու լիներ: 2014 թվականի Հայոց պատմության դասագրքերում գրված էր. «...հայերը հայկական լեռնաշխարհի բնիկ տերերն ու ժառանգորդներն են»: Նոր փոփոխված եւ Նախարարության կողմից հաստատված դասագրքերում հայի ու լիներ: մասին մի քանի տեսություններ կան, որոնցից մեկը հետեւյալն է. «Բալկանյան տեսության համաձայն՝ հայերի նախնիներն են բալկաններից Հայկական լեռնաշխարհ գաղթած փռոցացի գաղութարարները»: Այսինքն՝ ԿԳՄՍ-ն դասագրքերի տպագրությունը ձախողելուց հետո փորձում է Նոր չափորոշիչներով տպագրված գրքերում փոխել նաեւ հայերի ծագումնաբանությունը: Նշենք նաեւ, որ, ըստ մեր աղբյուրների, դպրոցներում 5-րդ դասարանի ռաւերենի Նոր դասագիրք չի լինելու, սակայն Նախարարությունից առիթը բաց չեն թողնում ամեն անգամ՝ նշելու, թե բոլոր դասագրքերը 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարաններում մինչեւ սեպտեմբերի վերջ լինելու են: Սեպտեմբերի գրեթե վերջն է, սակայն Նախարարությունը չի էլ նկատում, որ Նոր դասագրքերի տպագրությունն իսկապես ձախողված է: Պետրոս Դազարյանը Հանրային հեռուստաընկերության եթերում հանրային բարձր քննարկման արժանացած թեմաների վերաբերյալ կանչում է բոլոր ՔՊ-ական պատասխանատու անձանց, բայց ոչ իր կնոջը՝ ԿԳՄՍ Նախարար Ժաննա Մկրտչայանին, կամ Նրա տեղակալներից որեւէ մեկին: Այդպես էլ Հանրային պատասխանատուներից չպահանջեց բացատրել, թե ինչու սեպտեմբերի կեսին Նոր հասկանալի դարձավ, որ որոշ առարկաներ աշակերտները Նախորդ տարիների գրքերով են սովորելու:

Ինչպես հայտնի է, սեպտեմբերի 21-ին ՔՊ-ական պատգամավոր Հովիկ Աղազարյանին հայիոյած՝ 44-օրյա պատերազմի հերոս Լեւոն Գալստյանի հորը՝ Արմեն Գալստյանին, կալանավորել են: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ՔՊ-ական պատգամավոր Հովիկ Աղազարյանին Քննչական կոմիտե են կանչել ու հարցաքննել, որտեղ նա ցուցմունք է տվել ու ասել, որ իրեն հայիոյել են, իսկ ինքը որեւէ հայիոյան չի տվել: Քննիչը, լսելով ՔՊ-ական պատգամավորին, ավելի ուշ այլ բան է պարզել. Նրան ներկայացրել են տեսանյութ, որով հիմնավորվել է, որ պատգամավորը կեղծ ցուցմունք է տվել: Իրականում Աղազարյանը եւս հայիոյել է եւ առանց ամաչելու ստել է ընկիջին, փաստացի կեղծ ցուցմունք է տվել: Նշենք, որ Հովիկ Աղազարյանը առաջին անգամ չէ նման պատմության մեջ հայտնվում: Նա ամիսներ առաջ Արաբկիր վարչական շրջանում քաղաքացու կարտոֆիլն էր ոտքով իրել ու թափել, սակայն իրավապահները Նրան խուլիգանության համար պատասխանատվության չկանչեցին: Արցախից Տաթև Վիրաբյանին էր անձնական նամակով հայիոյել ու կրկին անպատիժ մնացել: Այնինչ, երբ ՔՊ-ականի հայիոյեցին, իրավապահները անմիջապես գործի անցան ու գինվորի հորը կալանավորեցին. սա ընտրովի արդարադատության հերթական դրսեւորումն է:

ՔՊ-ականների ընդհանուր «չաստ» այս օրերին ակտիվացել է: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս գերլարված օրերին իշխանականներն առավել հաճախ են սկսել իրահանգներ ստանալ վերեւից, թե ամեն քայլափոխի ինչ խոսեն, ինչ գրառում անեն կամ իրենց հարցադրույցներում ինչ խոսեն: ՔՊ-ականներին, մասնավորապես, իրահանգվել է ամեն քայլ անել թիմի հետ համաձայնեցված, առանց թիմի հետ քննարկելու ավելորդ բաներ չխոսել, որպեսզի հանրության՝ առանց այն էլ պրկված տրամադրություններն առավել չարվեն, ու դժգոհության մեծ ալիքն իրենց նկատմամբ ավելի չմեծանա: Ինչպես իշխանական մեր աղբյուրներն են հայտնում, ՔՊ-ականներին նաեւ իրահանգվել է այս օրերին գործել սինքրոն. ինչ-որ Նոր թեմա են դաշտ նետում ու սկսում են ամբողջ թիմով նույն մոտիվներով գրառումներ ու հայտարարություններ անել, որպեսզի իրենց թեգերը համոզիչ լինեն հանրության համար: Սրա մասին է փաստում նաեւ վերջին օրերին իշխանականների պահվածքը սոցցանցերում: Օրինակ՝ Նիկոլ Փաշինյանն ուղիղ եթերում սուր հակառաժական մոտիվներով որեւէ հայտարարություն է անում կամ էլ իրեն հռչակում է Հայաստանի ինքնիշխանության համար պայքարի «առաջամարտիկ», դրանից հետո ՔՊ-ականները սկսում են մեկ մարդու պես «վերեւից» գրված ու ուղարկված նույնաբովանդակ տեքստը «քոփի» անել ու դնել իրենց էջում առանց իրենց սեփական կարծիքն արտահայտելու՝ իրեն համոզիչ փաստարկ Նիկոլ Փաշինյանի ասածներին: Այս ողջ գործընթացն էլ ամենայն խստությամբ հետևում է ՔՊ քարտուղար Արթուր Հովհաննիսյանը, որպեսզի թիմակիցներն ավելորդ բաներ չխոսեն ու կատարեն իրահանգներ:



ԶՐՈՒՅՑ

# ԵՐԵՎԱՆԸ՝ ԱՌԱՆՑ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

**Մեղսեմքերի 17-ին սեղի ունեցած Երեւանի ավագանու ընտրություններից հետո փակուղային իրավիճակ է ստեղծվել:**

Ընտրության արդյունքներով անցողիկ շեմը հաղթահարել են 5 քաղաքական ուժ, սակայն նրանցից որեւէ մեկը 50 եւ ավել ծայր չի հավաքել, որպեսզի կարողանա միանձնյա քաղաքային իշխանություն ձեւավորի. արդյունքում արդեն մեկ շաբաթ է՝ Երեւանը քաղաքապետ չունի:

Անհրաժեշտ է լինելու կոալիցիաներ կազմել, կամ պետք է նոր արտահերթ ընտրություններ լինեն:

Ըստ Նախնական հաշվարկների՝ Երեւանի նորընտիր ավագանու առաջին նիստը տեղի կունենա հոկտեմբերի 10-ին: Այն կվարի ավագանու անդամներից ամենատարեցը, եւ անցողիկ շեմը հաղթահարած 5 ուժերը կընտրեն Երեւանի քաղաքապետին:

Հիշեցնենք, որ ԿԶՀ-ն ամփոփել է Երեւանի ավագանու ընտրությունների վերջնական արդյունքները, ըստ այդմ՝ մանդատները բաշխվել են հետևյալ կերպ՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն-24 մանդատ

«Ազգային առաջընթաց» կուսակցություն-14 մանդատ

«Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինք-12 մանդատ

«Հանրապետություն» կուսակցություն-8 մանդատ

«Հանրային ծայր» կուսակցություն-7 մանդատ:

«Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով գրուցել է «Հանրապետություն» կուսակցության անդամ Անի Խաչատրյանի հետ:

**Տիկին Խաչատրյան, ավագանի անցած մյուս քաղաքական ուժերի հետ քննարկումներ արդեն սկսել եք՝ ընտրությունների հետ կապված. ի՞նչ որոշում ունեք:**

«Քննարկումներ դեռ չենք սկսել, որոշում էլ չունենք, դեռ ժամանակ կա, քննարկում կանենք:

**Շատ է քննարկվում կոալիցիաներ ձեւավորելու հարցը: Ըստ շրջանառվող տեղեկությունների՝ «Հանրապետություն»-ը եւ «Քաղաքացիական պայմանագիր»-ը մտադիր են կոալիցիա կազմել:**



**Նազիր»-ը մտադիր են կոալիցիա կազմելու ճանապարհով գնալ: Ի՞նչ կասեք այս մասին, իշխող ուժի հետ այս հարցով քննարկում ունեցել եք:**

«Նման քննարկում առհասարակ չենք ունեցել ոչ՝ ներկուսակցական, ոչ էլ այլ ուժերի հետ, դրա համար էլ ոչինչ չեմ կարող ասել:

**Ձեր ուժն, ամեն դեպքում, ո՞ր տարրերակին է հակված՝ գնալ արտահերթ ընտրությունների ճանապարհով, թե՞ կոալիցիա կազմել:**

«Ես չեմ կարող ասել՝ ինչ տարրերակով կգնանք, բայց այս պահին այս իրավիճակում, համենայնդեպս, նոր արտահերթ ընտրություններ չեմ պատկերացնում:

**Հոկտեմբերի 10-ին տեղի կունենա Երեւանի նորընտիր ավագանու առաջին նիստը, որի ընթացքում քաղաքապետ պետք է ընտրի ավագանին. կրկին առաջադրելու՞ եք Արտակ Զեյնալյանի թեկնածությունը:**


«Մենք քննարկում չենք ունեցել, չգիտենք դեռ, պետք է քննարկենք, հասկանանք:

**Ստացվում է՝ արդեն մեկ շաբաթից ավելի է՝ Երեւանը քաղաքապետ չունի՝ չնայած նրան, որ հազարավոր խնդիրներ կան քաղաքում:**

«Բնականաբար, դա հասկանում ենք, քաղաքը պետք է ղեկավար ունենա, առաջիկայում կորոշվի այդ հարցը:

*Զրուցեց ԶԻՆՍՏԻԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

## ԴԻՄԱՏԵՆՈՐՆԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ



Հայտնի են այս տարվա առաջին կիսամյակի բյուջեի կատարման ցուցանիշները: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ 2023 թվականի առաջին կիսամյակում գրանցվել է 11.4 տոկոս տևտեսական ակտիվության աճ՝ պայմանավորված հիմնականում ծառայությունների աճով:

Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ՝ պետական բյուջեի եկամուտներն աճել են 18.1 տոկոսով կամ 177.9 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված հարկային եկամուտների աճով:

Պետական բյուջեի ծախսերն աճել են 12.7 տոկոսով կամ 116.0 մլրդ դրամով, ընդ որում՝ 12.1 տոկոսով՝ 98.6 մլրդ դրամով, աճել են ընթացիկ ծախսերը, 18 տոկոսով՝ 17.4 մլրդ դրամով՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները:

Արտաքին աղբյուրներից ստացվել են շուրջ 4.1 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով առաջին կիսամյակի համար ծրագրված մուտքերի 48 տոկոսը եւ 6.6 տոկոսով կամ 291.1 մլն դրամով գիջելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

## ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՎԱՐՏՎԵՑԻՆ



Իվանյանում ավարտվել են Ադրբեջանի պատգամավոր Ռամին Մամեդովի մասնակցությամբ հերթական բանակցությունները Արցախի հայերի ներկայացուցիչների հետ:

Ադրբեջանական լրատվամիջոցները նշում են, որ այս տարվա մարտին Ադրբեջանի Նախագահ Իլհամ Ալիևի կողմից Ռամին Մամեդովը նշանակվել էր Արցախում բնակվող հայերի հետ շփումների պատասխանատու: Հանդիպման ավարտից հետո դեռ ոչ մի տեղեկություն չի հրապարակվել:

Հիշեցնենք, որ առաջին բանակցությունները կայացել են սեպտեմբերի 21-ին Եվլախ քաղաքում:

## ԻՐԱՎԻՃԱԿ

## ՆԺԱՄԱՆԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՄՆ վարչակազմի բարձրաստիճան պաշտոնյաները երկուշաբթի կժամանեն Հայաստան. հայտնում է Reuters-ը՝ վկայակոչելով ամերիկացի պաշտոնյային:

Սպասվում է ԱՄՆ Միջազգային գաղափարական գործակալության՝ USAID-ի դեկավար Սամանթա Փաուերի եւ Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով ԱՄՆ պետքարտուղարի օգնականի պաշտոնակատար Յուրի Զիմի այցը:

«Փաուերը կհանդիպի բարձրաստիճան պետական պաշտոնյաների հետ եւ կվերահաստատի ԱՄՆ աջակցությունը Հայաստանի ժողովրդավարությանը, ինքնիշխանությանը, անկախությանը եւ տարածքային ամբողջականությանը, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղից բխող մարդասիրական կարիքները բավարարելու հանձնառությանը»,- ասել է պաշտոնյան:

Փաուերը կլինի ԱՄՆ ԱԶԳ առաջին դեկավարը, որը կայցելի Հայաստան եւ կվերահաստատի ԱՄՆ-ի գործընկերությունը երկրի հետ, ինչպես նաեւ «խորը մտահո-

գություն կհայտնի Լեռնային Ղարաբաղում էթնիկ հայ բնակչության վերաբերյալ եւ կքննարկի այնտեղ հումանիտար ճգնաժամը լուծելու միջոցները»:

«Միացյալ Նահանգները խորապես անհանգստացած է Լեռնային Ղարաբաղում հումանիտար իրավիճակի մասին հաղորդագրություններով եւ կոչ է անում թույլ տալ անարգել մուտք գործել միջազգային մարդասիրական կազմակերպություններին եւ առեւտրային տրանսպորտին»,- ասել է պաշտոնյան:

## ԸՆԴՈՒՆԵՑ ՄԵՆԱՏՈՐԻՆ

ՀՀ ԱԺ Նախագահ Ալեն Սիմոնյանը սեպտեմբերի 25-ին ընդունել է ԱՄՆ սենատոր Գերի Փիթերսին: Խորհրդարանի ղեկավարը ողջունել է սեպտեմբերի 21-ին ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի Նախագահ Ռոբերտ Մենենդեսի, Գերի Փիթերսի եւ մի շարք այլ սենատորների՝ Սենատի քննարկմանը ներկայացված երկկուսակցական «Հաջակցություն հայերին ադրբեջանական ագրեսիայի դեմ» օրենսդրական ակտի Նախագիծը՝ հույս հայտնելով, որ այն կընդունվի: Անդադառնալով սեպտեմբերի 21-ին Նյու Յորքում կայացած ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի հրատապ նիստին՝ ՀՀ ԱԺ Նախագահը շնորհակալություն է հայտնել ԱՄՆ-ի աջակցող ելույթի համար՝ շեշտելով, որ ստեղծված իրավիճակում անչափ կարեւոր է միջազգային գործընկերների արդյունավետ եւ հստակ քայլերի հրատապությունը, այդ թվում՝ Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցների սահմանումը:

Հանդիպմանը քննարկվել են սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի սանձազերծած հերթական լայնածավալ հարձակման մանրամասներն ու հետեւանքները: Սենատորը տեղեկատվություն է տրամադրել Վայոց ձորի եւ Սյունիքի մարզեր իրականացրած այցից: Նա դատապարտել է Լեռնային Ղարաբաղում տիրող հումանիտար իրավիճակը՝ աջակցություն հայտնելով հայ ժողովրդին: Գերի Փիթերսը վերահաստատել է Միացյալ Նահանգների աջակցությունը Հայաստանի տարածքային ամբողջականությանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԹԱԳՈՒՂԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԸ՝ ԱՄՆ ՄԵՆԱՏՈՐԻՆ

ՀՀ ԱԺ «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունների ներկայացուցիչները հանդիպել են ԱՄՆ սենատոր Փերի Փիթերսի գլխավորած դասվիրակության հետ:

Հանդիպմանը մասնակցել են ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավորներ Աննա Գրիգորյանը, Լիլիթ Գալստյանը, ՀՀ ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Թագուհի Թովմասյանը, ինչպես նաեւ ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Քրիստինա Ալիսոն Ջվինը:

Թագուհի Թովմասյանը նշել է, որ հայերը գտնվում են ծանր ժամանակաշրջանում: «Պատմության դասագրքերից գիտենք, թե ինչպես են 1915 թվականին մարդկանց զնդակահարել, ցեղասպանել, որի արդյունքում մեծացել է հայկական սփյուռքը: Սեպտեմբերի 19-ին ականատես եղանք, թե ինչպես շրջափակվեց Լեռնային Ղարաբաղն ու ռմբակոծվեց: Մարդիկ փախչելու տեղ չունեին»,- մանրամասնել է Թագուհի Թովմասյանը՝ խոսելով բազմաթիվ զոհերի, տեղահանվածների, գերեվարված ու առեւանգված քաղաքացիների մասին: Նա նշել է, որ ակնկալում են առավել ազդեցիկ երկրների աջակցությունը հայրենիքն ու ժողովրդավարությունը պահպանելու համար: Պատգամավորը հավելել է, որ Լեռնային Ղարաբաղի դեպքերից հետո հաջորդ դաժանությունները, հնարավոր է, կատարվեն Հայաստանում, եւ դրանք կանխելու համար անհրաժեշտ է գործել պատժամիջոցներ սահմանելով Ադրբեյջանի եւ նրա նախագահի նկատմամբ:

Լիլիթ Գալստյանը նշել է, որ այն, ինչ կատարվում է Լեռնային Ղարաբաղում, ցեղասպանություն է, ինչը կարող էր կանխվել, եթե միջազգային հանրության վերաբերմունքը լիներ համարժեք: Նա նշել է, որ թեեւ ԱՄՆ-ն բազմաթիվ սեռատորների, կոնգրեսականների մակարդակով դատապարտել է Ադրբեյջանի գործողությունները, սակայն Հայաստանն ակնկալում էր ավելի հստակ, հասցեական գործողություններ: Խոսելով անվտանգության խնդիրների մասին՝ «Հայաստան» խմբակցության պատգամավորը նշել է, որ միջազգային հանրությունը եւ հատկապես ԱՄՆ-ն պետք է



որոշակի երաշխիքային մեխանիզմներ մշակել՝ ի պաշտպանություն Լեռնային Ղարաբաղի բնակիչների, եւ անհրաժեշտության դեպքում երաշխավորեն նրանց փրկության ճանապարհը: «Ես բազմիցս բարձրաձայնել եմ 907-րդ բանաձեւի մասին, որը վերաբերում է Ադրբեյջանին ԱՄՆ կողմից ռազմական աջակցությանը: Այդ բանաձեւով ագրեսորի համար կանաչ լույս բացվեց»,- հավելել է Լիլիթ Գալստյանը՝ համոզմունք հայտնելով, որ ԱՄՆ-ն բավարար չանցքեր կգործադրի խաղաղության եւ անվտանգային երաշխիքներ ապահովելու համար:

Աննա Գրիգորյանը նշել է, որ Ադրբեյջանը չպատժվեց 2020 թվականի ագրեսիվ գործողությունների համար եւ այսօր էլ շարունակում է նույն ձեռագիրը: Նա խնդրել է գործել՝ նշելով, որ հակառակ դեպքում էթնիկ զտումն ու ցեղասպանությունը կշարունակվեն:

«Ձեր ուղերձները շատ հստակ էին. գիտակցում եմ, որ պատմական պահ է այս երկրի համար: Ուզում եմ նշել, որ ինքս ԱՄՆ-ում ձեր նշած գործողությունների վերաբերյալ օրենսդրական նախագծի նախաձեռնող եմ: Դրանցից մեկն էլ ԱՄՆ նախագահին լիազորություններ տալն է, որպեսզի նա կարողանա պատժամիջոցներ կիրառել այնպիսի դերակատարների նկատմամբ, ինչպիսին Ադրբեյջանն է: Այդ օրենսդրական նախաձեռնությամբ հղում կկատարվի նաեւ 907-րդ բանաձեւին՝ Ադրբեյջանին աջակցությունը սահմանափակելու վերաբերյալ: Օրենսդրությունը նաեւ նախատեսելու է ֆինանսավորում՝ հումանիտար օգնության համար»,- ասել է ԱՄՆ սենատոր Փերի Փիթերսը: Նա նաեւ տեղեկացրել է, որ այցելել է Լաչինի միջանցք եւ հանդիպելու է բռնի տեղահանված անձանց հետ:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԺԱՄԱՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆ

ՌԴ ՆԳՆ ղեկավար, ոստիկանության գեներալ Վլադիմիր Կոլոկոլցեյը ժամանել է Երեւան՝ մասնակցելու Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունների միավորված կոլեգիայի նիստին:

«Նախատեսված են նաեւ մի շարք այլ միջոցառումներ»,- հայտնել է Ռուսաստանի ՆԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Իրինա Վոլկը:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԸԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Ջոհված եւ անհետ կորած համարվող զինծառայողների ու քաղաքացիական անձանց որոնողափրկարարական աշխատանքները սեպտեմբերի 21-ից շարունակվում են ԼՂ ամբողջ տարածքում: «Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին տեղեկացնում են ԼՂ ՆԳՆ

արտակարգ իրավիճակների պետական ծառայությունից՝ մանրամասնելով, որ սեպտեմբերի 21-ին Ստեփանակերտի Աջափնյակ թաղամասից հայտնաբերվել է քաղաքացիական 1 անձի մարմին:

Աղբյուրի տեղեկատվությամբ՝ սեպտեմբեր 22-ին իրականացված որոնումների արդյունքում Շուշիի շրջանի Ղալբալիշենի տարածքից հայտնաբերվել եւ տարհանվել է վիրավորում ստացած մեկ զինծառայող, իսկ Չարեքտարից՝ զոհված 2 զինծառայողի մարմին:

Սեպտեմբերի 23-ին տարհանվել է 68 մարմին, որից 4-ը՝ քաղաքացիական անձինք են Ասկերանի շրջանի Սառնաղբյուր գյուղից, ընդ որում՝ 2 երեխա եւ տարեց ամուսիններ:

Նույն օրը Նախիջեւանի եւ Սարուշեն գյուղերի տարածքից հայտնաբերվել է 2 քաղաքացի, նրանց կյանքին վտանգ չի սպառնում:

Սեպտեմբերի 24-ին տարբեր ուղղություններով իրականացված որոնողական աշխատանքների արդյունքում տարհանվել է ընդհանուր 34 մարմին, իսկ Ասկե-

րանի շրջանի Շոշ գյուղից քաղաքացիական 3 անձ է հայտնաբերվել:

Որոնողափրկարարական աշխատանքները շարունակվում են: Աղյուսքների մասին ԱԻ ծառայությունը պարբերաբար կիրապարակի տեղեկություններ:

Գործում են Օպերատիվ շտաբը՝ /047/ 95- 75 -51 հեռախոսահամարով, եւ ԱԻՊԾ թեժ գիծը՝ 911:

ՊԵՄԿՈՎԸ ՄԵԿՆԱԲԱՆԵՑ

Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի, Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիևի եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հնարավոր եռակողմ հանդիպման կոնկրետ ուղվածքը դեռ չկան:

Այս մասին հայտարարել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը:

«Առայժմ եռակողմ հանդիպման վերաբերյալ հստակ ուղվածքներ չկան»,- հայտարարել է նա:

ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՌՈՒՄԱՍՅԱՆԸ

Ռուսաստանը պատրաստ է ընդլայնել փոխգործակցությունը Եվրասիական տնտեսական միության բոլոր գործընկերների հետ. այս մասին հայտարարել է Ռուսաստանի կառավարության ղեկավար Միխայիլ Միշուստինը «Իննուպրոմ. Ղազախստան» արդյունաբերական ցուցահանդեսի լիազուրմար նիստին:

«Ռուսաստանը բաց է Եվրասիական տնտեսական միության բոլոր գործընկերների հետ փոխգործակցության ընդլայնման համար: Տեխնոլոգիական ինքնիշխանության ամրապնդումն այսօր դառնում է Եվրասիական տարածքում համատեղ աշխատանքի նշանակալի վեկտորներից մեկը»,- ??նշել է ՌԴ կառավարության ղեկավարը:

Միշուստինի խոսքով՝ այսօր կարելի է միավորել ռեսուրսներն ու իրավասությունները՝ ապահովելու արտադրական համալիրների կայունությունը արտաքին գործոնների նկատմամբ եւ պաշտպանելու տնտեսությունն ու քաղաքացիներին աշխարհում աճող տուրբուլենտության եւ մրցակցության աճի պայմաններում:

ՕՅԵԼՅԱ ՀՈԿՅԱՆՆԻՍՅԱՆ

ԲԱՔՈՅԱՆԸ ԳՐՈՒՄ Է

Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Ռուստամ Բաքոյանը սոցցանցի իր էջում գրում է. «Վերջին օրերին հասարակության մեջ առկա ատելության խոսքի բարձր աստիճանը, բռնության եւ անհանդուրժողականության ակնհայտ դրսեւորումները հասել են վտանգավոր չափերի:

Հայրենիքի հանդեպ զգոնությամբ եւ նվիրումով ծառայող, մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների եւ ազատությունների հարգման եւ պաշտպանության սկզբունքներով առաջնորդվող շատ ուստիկաններ, որոնք նաեւ 44-օրյա պատերազմի ժամանակ անձնվիրաբար պայքարել են թշնամու դեմ, այսօր էլ փաստացիորեն պայքարում են մեր պետականության խարխուլման դեմ, առավել քան երբեք հասարակության կողմից առնվազն հարգանքի եւ պատշաճ վերաբերմունքի կարիք ունեն:

Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության բնորոշ գծերից է օրենքի գերակայությունը, եւ յուրաքանչյուր ոք պարտավոր է հարգել Հայաստանի Հանրապետության օրենքները, իսկ իրավահպատակ ուղից շեղվող ցանկացած անձ անխուսափելիորեն յուրաքանչյուր դեպքում արժանանալու է պատշաճ իրավական գնահատականի:

Ուշադիր հետեւում եմ տեղի ունեցող իրադարձություններին եւ հարկ եղած դեպքում պատրաստ եմ օրենսդրությամբ ինձ վերապահված լիազորությունների շրջանակում գործել՝ հանուն մարդու իրավունքների հարգման եւ պաշտպանության»:

Միլեւի՛ ՀՀ քաղաքացիներ, կոչ եմ անում հեռու մնալ սադրանքներից, մանիպուլյատիվ գործողություններից եւ ձեր քայլերով չվնասել ՀՀ պետականությանը»:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

# ԱԼԲԵՐՏ ԲԱԶԵՅԱՆԸ՝ ԱՄԾ-ՈՒՄ

**ՄԱԾ-ում լինարկվում է Երեւանի նախկին ֆաղաֆաղէս Ալբէրտ Բագելյանին մեղադրանք առաջադրելու եւ խափանման միջոց ընտրելու հարցը:**

Նշենք, որ «ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝ Երեանի նախկին քաղաքապետ Ալբերտ Բազեյանին տարել են ՎՍՏ եւ բռնի կերպով իշխանության յուրացման համար ձերբակալել են: Այս պահին նա ոստիկանության՝ ձերբակալված անձանց պահման վայրում է:

«ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Բազեյանի տուն գնացել է ԱԾԾ երկու մեքենա, որից հետո սկսել են տունը խուզարկել: «ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ վերջինիս բնակարանից տարել են որսորդական գնեքը, Վազգեն Աարզայանի կողմից պարզեաւորած գնեքը ու մեկ համակարգիչ: Այսքանով ամեն ինչ չի ավարտվում: Ալբերտ Բազեյանն ԱԾԾ-ում ասել է, որ ինքն այս պահից հացադուլ է հայտարարում, նկատմամբ քաղաքական հետապնդում է իրականացվում, բանի որ ինքը պետք է այսօրվա հանրահավաքին ելույթ ունենար:

Հավելենք, որ խուզարկության ժամանակ անգամ Բազեյանի որդուն թույլ չեն տվել ներս մտնել: Հանցագործության մասին հաղորդում տալուց հետո նոր փաստաբաններին են թույլ տվել մտնել տուն:

Հիշեցնենք՝ օրեր առաջ «Ժողովուրդ» օրաթերթը Հանրապետության հրապարակում գրուցել էր Ալբերտ Բազեյանի հետ:

Մեր հրապարակումից հետո ԱԾՆ պաշտոնապես հայտնեց, որ նախաքննության ընթացքում կատարված ապացուցողական և վարուբային այլ գործողությունների արդյունքում պարզվել է, որ «Խաչակիրներ ռազամահայրենասիրական» ՀԿ անդամներ Ս.Խ-ն, Կ.Դ-ն, Դ.Տ-ն, Վ. Մ-ն, Մ.Մ-ն, Գ.Լ-ն, Ա.Հ-ն, ինչպես նաև Ա.Բ-ն և այլ անձինք, ունենալով հակալիքիանակայն հայացքներ, ՀՀ կառավարության անդամների և ղեկավարի նկատմամբ գա-



դիպարական թշնամանք, նախնական համաձայնության գալով միմյանց հետ, պայմանավորվածություններ են ծեռք բերել իրենց մոտ պահվող գեներ-գինամթերքը որպես հանցագործության գործիք օգտագործելու միջոցով կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնության գործադրելու եղանակով եւ դրա սպառնալիքով զավթելու իշխանությունը, մասնավորապես՝ Սահմանադրությամբ չնախատեսված այլ եղանակով տիրանալ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորություններին:

Հանցավոր խմբի անդամներն ուղղակի դիտավորության հանցանք կատարելու համար ձեռք են բերել հեռահաղորդակցության սարքեր, հեռախոսային ու այլ

**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

# ԿԱՐԵՎՈՐ

# ՀԱՐՑԱՔՆՆԵԼ ԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթին երեկ հայտնի դարձավ, որ ՀՀ քննչական կոմիտեի քննիչը գնացել է հիվանդանոց եւ հարցաքննել «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանին՝ հետաքրքրվելով, թե ով է հարվածել իրեն, եւ ինչպես է եղել դեպքը: Ուշագրավն այն է, որ քննությունն ընթանում է ոստիկանի կողմից ոչ թե պատգամավորին ծեծի ենթարկելու հիմքով, այլ ընդամենը քաղաքացուն ծեծի ենթարկելու հատկանիշներով, ու մինչ օրս Գեղամ Մանուկյանի նկատմամբ բռնություն կիրառած ոստիկանին չեն գտել:

Նկատենք, որ երբ «Եռաբլուշ» զինվորական պանթեոնում 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողի ծնողն ընդամենը հայիոյել էր ԶՊ-ական պատգամավոր Յովիկ Սիզագարյանին, Քննչական կոմիտեն խուլիգանության հատկանիշներով քրեական գործ է հարուցել ԶՊ-ական պատգամավորի դեմ խուլիգանական գործողություններ անելու համար ու զինվորի հորը կալանավորել: Զերթական անգամ իրավապահ մարմինները ցույց տալիս, թե ինչպես են ունենում արդարա-

դատությունն իրականացնում:

**Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

**ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ  
ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ**

Պարզվել են գինժառայողների նկատմամբ վերադասի կողմից բռնություն գործարդելու, ծառայակցին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելու դեպքի էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ:

ՀՀ քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության 6-րդ կա-  
յազորային քննչական բաժնում իրակա-  
նացվող քննությամբ պարզվել է, որ կոչու-  
մով լեյտենանտ գինծառայողը, հանդիսա-  
նալով ՀՀ ՊՆ N զորամասի հրաձգային  
վաշտի հրամանատար, պատասխանա-  
տու լինելով վաշտի անձնակազմի գինվո-  
րական կարգապահության եւ բարոյահո-  
գեթանական վիճակի համար, գինվորա-  
կան ծառայության պարտականությունե-  
րը կատարելու նկատմամբ դրսեւորել է ՀՀ  
ԶՈՒ Ներքին ծառայողական կանոնագրքի  
դրույթներին հակասող վարքագիծ:

Մասնավորապես՝ վերջինս շարքի դիմաց ներկա գտնվող ծառայակիցների ներ-

կայությանը պատիվն ու արժանապատ-  
վությունը նվաստացնող արտահայտու-  
թյուններ եւ կատարել մարտական հերթա-  
պահության ընթացքում մարտական դիր-  
քում քնող զինծառայողի հասցեին, ինչի  
հետեւանքով 2023թ. սեպտեմբերի 12-ին  
ժամը 19:55-ի սահմաններում, ՀՀ ՊՆ Ռ  
գործմասի պահակախության շրջանի կրա-  
կային դիրքի հարակից տարածքում  
խրամբջիջներից մեկում, զինծառայող  
Ալեքս Ավանեսյանն իրեն ամրակցված զն-  
դացրից կրակոց եւ արձակել իր գլխի ճա-  
կատային հատվածին եւ ստացած կյանքի  
հետ անհատությունելի վնասվածքից մա-  
հացել: Բացի այդ, վաշտի իրավաձևատա-  
րը այլ զինծառայողների հրակայությամբ  
բռնություն եւ գործադրել մեկ այլ զինծա-  
ռայողի նկատմամբ:

Ձեռք բերված բավարար փաստերի հի-  
ման վրա՝ իրավաձևատարի նկատմամբ  
հանրային քրեական հետապնդում եւ հա-  
րուցվել եւ նրան մեղադրանք եւ ներկա-  
լացվել:

Միջնորդություն է ներկայացվել դատա-  
րան՝ վերջինիս նկատմամբ որպես խա-  
փանման կաշիք կալանավորում ընտրելու  
վերաբերյալ, որը բավարարվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

ՈՒՇԱԳՐԱԿ

**ՏՂԱՄԱՐԴԸ  
ՀՈՍԱՆՔԱՀԱՐՎԵԼ Է**

Սեպտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Շիրակի մարզային վարչության օպերատիվ կառավարման կենտրոն ահագանգ է ստացվել, որ Պեմզաշեն գյուղին կից գտնվող տրանսֆորմատորային ենթակայանը սևուցող էլեկտրական հենասյան տակ տղամարդու դիկա:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող  
Գազիկ Շամշյանը, դեպքի վայր են  
մեկնել ՀՀ ՆԳՆ ոստիկանության Շի-  
րակի մարզային վարչության պետն ու  
ոստիկանության Արթիկի բաժնի պե-  
տը:

Ժամանե՛լ են ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Շիրակի մարզի գումարտակի պարեկները:

Ոստիկանությունն ու քննիչները պարզել են, որ մահացածը Պեմզաշեն գյուղի բնակիչ, 55-ամյա Ռոբերտ Կիրակոսյանն է, որը, ըստ նախնական տեղեկությունների, մահացել է էլեկտրահարվելու հետեանքով:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ երեկ՝ ժամը 13:30-ի սահմաններում, «Վասիլ» ՍՊԸ-ի տնօրեն, Պեմգաշեն գյուղի վարչական ղեկավար Ադասի Վարդանյանի հրավերով Ռ. Կիրակոսյանը բարձրացել է Նշված էլեկտրասյան վրա արտադրամասի խափանված էլեկտրական հոսանքի սնուցումը վերականգնելու նպատակով, որի ժամանակ էլ մահգոյշաբար հոսանքափարվել է տեղում մահացել է:

Դեպքի փաստով Արթիկի եւ Անիի քննչական բաժնում նախաձեռնվել է է քրեական վարույթ:

Քսենիչի որոշմամբ՝ նշանակվել է դի-  
ակի դատաբժշկական փորձաքննու-  
թյուն:

# ՄԵՔԵՆԱՆ

## ՀՐԴԵՎՈՒԹՅԱՆ Է

Սեպտեմբերի 25-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: Ժամը 09:50-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության 911 ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնն ահազանգ է ստացվել, որ Սեւան քաղաքի Նաիրյան փողոցում «Հայփոստ» ՓԲԸ-ի հարեւանությամբ, ավտոմեքենա է այրվում:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող  
Գագիկ Շամշյանը, դեպի վայր է ժա-  
մանել Սեանի թիվ 32 հրշեջ-փրկա-  
րարական ջոկատից 1 մարտական  
հաշվառել:

Պարզվել է, որ հորդեհ է բռնկվել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի, 78-ամյա Վիկտոր Կրեչինին պատկանող Volkswagen Vento մակնիշի ավտոմեքենայում:

Հիշեցնեցի մարտի եւ ավտոմեքենա-  
յում առաջացած կրակը, հոսանքագր-  
կել եւ ավտոմեքենան, ապա փակել  
գացաբաւոնի փականը:

Այրվել է սրահի ամբողջությամբ, վառսմբել է առջեի դիմապակին, կողային ապակիները, եւ մասամբ ջերմահաղմբել է շառժիհի հատվածը:

Թե ինչևն է եղել ավտոմեքենայում առաջացած հրդեհի պատճառը, պարզվում է:

Ըստ նախնական տեղեկությունների՝  
տուժածներ չկան:

- *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 22-ից 25-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 118 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

**ՄԱՐԶ**

**ԲԺԻՇԿՆԵՐԻ ՊԱԿԱՍ ԿԱ**

Տավուշի մարզի առողջապահական հիմնարկներում բժիշկների, բուժաշխատողների պակաս կա: Դրա պատճառն այն է, որ Տավուշի մարզի բնակիչ բժշկական բուհերի շրջանավարտները գերադասում են մնալ, աշխատել Երեւանում, որովհետեւ Տավուշի մարզի բուժհիմնարկներում բժշկական սարքավորումների պակաս կա, այդտեղ աշխատանքի պայմանները երիտասարդ բժիշկ-մասնագետներին չեն բավարարում: Տավուշի բուժհիմնարկներում աշխատում են գրեթե 100 բժիշկներ, որոնք տարեց տարիքի են, կենսաթոշակառու են, սակայն փոխարինող բժիշկ չկան: Կատարյալ շարունակում են աշխատել: Տավուշի մարզպետարանի ենթակայությամբ գործում է 21 բժշկական հաստատություն: Տավուշի մարզպետարանից հայտնում են, որ մարզի բժշկական հիմնարկներում առկա է բժշկի, բուժաշխատողի ընդհանուր թվով 23 թափուր հաստիք: Մարզի հետեւյալ առողջապահական հիմնարկներում առկա է հետեւյալ մասնագիտություններով բժիշկների թափուր տեղեր՝ «Իջեւանի ԱԿԿ»՝ ՓԲԸ-ում՝ տնոգրաֆիստ, «Խաշթառակի ԱԿԿ»՝ ՊՈԱԿ-ում՝ ընտանեկան բժիշկ, «Արծաթեղի ԱԿ»՝ ՊՈԱԿ-ում՝ մանկաբարձ-գինեկոլոգ, տնօրեն-ընտանեկան բժիշկ, մանկաբույժ, «Սեւքարի ԳԲԸ»՝ ՊՈԱԿ-ում՝ ընտանեկան բժիշկ, «Բագրատաշենի ԳԲԸ»՝ ՊՈԱԿ-ում՝ ընտանեկան բժիշկ, «Նոյեմբերյանի ԲԿ»՝ ՓԲԸ-ում՝ թերապեւտ, հեմոդիալիզի բժիշկ, նյարդաբան, սրտաբան, մանկաբույժ, վիրաբույժ, շտապ օգնության բժիշկ, տնոգրաֆիստ, «Բերդի ԲԿ»՝ ՓԲԸ-ում՝ հոգեբույժ, ուռուցքաբան, նյարդաբան, ՇԲԾԿ-ի հերթապահ բժիշկ, անեսթեզիոլոգի բուժքույր: Ընտանեկան բժիշկ-տնօրենի թափուր հաստիքներ կան Ներքին Կարմիրաղբյուրի, Մովսեսի, Ազատամուտի ԱԿԿ ՊՈԱԿ-ներում:

**«ԽԵԼԱՅԻ ԱՆԱՄՆԱԳՈՄ» Է ԿԱՌՈՒՑՎԵԼ**

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հաճախ է անասնապահներին խորհուրդներ տալիս «խելացի անասնագետներ» կառուցելու անհրաժեշտության վերաբերյալ: Տավուշի մարզպետ Յայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ հարցնելով, թե Տավուշի մարզում քանի «խելացի անասնագետ» կա: Մարզպետի պատասխանում նշված է. «Փոքր եւ միջին «խելացի անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման եւ դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցություն» ծրագրի շրջանակներում Տավուշի մարզում կառուցել է 2 անասնաշենք Իջեւան համայնքի Դիտավան եւ Սարիգյուղ գյուղերում: 2023 թվականին Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան եւ Բաղանիս բնակավայրերի 2 շահառուների եւ Էկոնոմիկայի նախարարության միջեւ կնքվել են փոխհատուցում տրամադրելու մասին պայմանագրեր: Շինարարություններն ընթացքի մեջ են»:

ՈՍՎԱՆ ՄԱՐԶԱՅԱՆ  
Տավուշ

**ՆՈՐՈՒԹՅՈՒՆ**

**ԻՆՉԸ ԿՓՈԽԱՐԻՆԻ «Wildberries»-ԻՆ**

«Wildberries»-ը հայտարարել է, որ ամբողջությամբ վերացվել է Տեխնիկական այն սխալը, որի միջոցով հնարավոր էր լինում գնումներ կատարել այլ զանգվածների համար նախատեսված գներով:

Տեխնիկական ժամանակ է, ինչ Հայաստանում գործում է SSB Academy-ն, որի հիմնադիր Տարոն Պապիկյանը հայ գործարարների շրջանում բազմաթիվ դասընթացներ եւ վեբինարներ է անցկացրել:

«Հայ գործարարների շրջանում անցկացնում ենք որպես վաճառող մուտք գործելու եւ միանգամից 7 շուկաներում վաճառք իրականացնելու վերաբերյալ ֆունդամենտալ եւ պրակտիկ դասընթացներ, գործընթացների կազմակերպման վերաբերյալ անհատական խորհրդատվություններ, ինչպես նաեւ անվճար վեբինարներ: Դասընթացներ եւ վեբինարներ կան նաեւ այն մարդկանց համար, որոնք ցանկանում են որակավորվել որպես «Վալյուբերիզ» մենեջեր եւ մատուցել ծառայություններ այն գործարարներին, որոնք արդեն իսկ վաճառում են կամ պլանավորում են վաճառել «Վալյուբերիզում»»:

«Wildberries»-ի տեխնիկական սխալը կարգավորելուց հետո բնակիչները սկսեցին դժգոհել տնտեսվարողների այդ քայլից, քանի որ բավականին մատչելի եւ որակով գնումներ էին կարողանում անել շատ արագ սկսեցին ուսումնասիրել «Ozon»-ը:

Սկզբում «Ozon»-ը նախատեսում էր մուտք գործել հայկական շուկա 2023 թվականի ուշ աշնանը, սակայն գործընթացն ավելի արագ տեղի ունեցավ, քանի որ հայաստանյան ներկայացուցիչները սկսել են տիրապետել ապրանքների հաշվառման ուղղությամբ առաքմանը:

Ներկայումս Հայաստանում բացվել է «Ozon»-ի 20 լոգիստիկ կենտրոններ, մի քանի օրից արդեն կգործեն ստացման կետերը: Բնակիչներին հասանելի է լինել



լու ռուսական շուկայի գրեթե ողջ տեսականին՝ 196 միլիոն ապրանքատեսակ ավելի քան 20 կատեգորիայում գրեթե 100 հազար տեսակի միջին անվանական գներով: Նաեւ կարգեցիկ պատվերների տրամադրման կետերի տարածքների համար նախատեսված պահանջները եւ կղիտարկի հաճախորդին հարմար եւ մոտ տարածքների մեծ մասը: Միաժամանակ բոլոր կետերը բրենդավորված կլինեն ընկերության կորպորատիվ ռոնով, կահավորված կլինեն հանդերձարաններով, իսկ առաքման միջին ժամկետը մոտ մեկ շաբաթ է:

«Մենք տեսնում ենք, որ հաճախորդները սիրում են պատվերները ստանալ իր ռուսական շուկայի գրեթե ողջ տեսականին՝ 196 միլիոն ապրանքատեսակ ավելի քան 20 կատեգորիայում գրեթե 100 հազար տեսակի միջին անվանական գներով: Նաեւ կարգեցիկ պատվերների տրամադրման կետերի տարածքների համար նախատեսված պահանջները եւ կղիտարկի հաճախորդին հարմար եւ մոտ տարածքների մեծ մասը: Միաժամանակ բոլոր կետերը բրենդավորված կլինեն ընկերության կորպորատիվ ռոնով, կահավորված կլինեն հանդերձարաններով, իսկ առաքման միջին ժամկետը մոտ մեկ շաբաթ է:

«Մենք տեսնում ենք, որ հաճախորդները սիրում են պատվերները ստանալ

պատվերների տրամադրման կետերից: Դրանք օգտագործվում են շուկայում 10 պատվերներից 8-ի համար: Բացի այդ, տեսնում ենք Հայաստանում ծեռնարկատերերի հետաքրքրությունն այս ոլորտի զարգացման նկատմամբ, ուստի որոշել ենք անսխալաբեր ժամանակում երկրում գործարկել ծրագիր պատվերների տրամադրման կետերի սեփականատեր-գործընկերներին աջակցելու համար»,- ասում է ԱՊՀ-ում «Ozon»-ի գործընկեր-լոգիստիկ ծրագրերի զարգացման տնօրեն Հարություն Գաբրիելյանը:

«Ozon»-ը զարգացնում է բիզնեսը եւ կառուցում է իր լոգիստիկ ենթակառուցվածքը Բելառուսում, Ղազախստանում, Ղրղըզստանում եւ Հայաստանում:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ԲՅՈՒՋԵ**

**ՎԵՐԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ՆՊԱՍՏԵԼ Է**

Հայաստանից Ռուսաստան 2023-ի առաջին կիսամյակում արտահանման շուրջ 215 տոկոս դուլարային աճին զգալի նպաստել է վերաարտահանումը:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հայտնեց ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի հանձնաժողովի նիստին՝ 2023 թ. պետական բյուջեի առաջին կիսամյակի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկանքի քննարկմանը:

Նախարարը նշեց, որ 2023-ի առաջին կիսամյակում շարունակվել է ՌԴ-ից մարդկանց եւ կապիտալի մեծ ներհոսքը:

«2023-ի առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, դեպի ՌԴ ապրանքների արտահանման շուրջ 215 տոկոս դուլարային աճին զգալի նպաստում է ունեցել վերաարտահանումը, որը նպաստել է շուրջ 187 տոկոսային կետով, մինչդեռ հայկական ծագման ապրանքների արտահանումը նպաստել է 28 տոկոսային կետով»,- ասաց նախարարը: Նախարարն անդրա-

դարձավ նաեւ Ռուսաստանից եկած զբոսաշրջիկների թվի աճին՝ նշելով, որ առաջին կիսամյակում ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը 70 տոկոսով աճել է, որին մեծ նպաստ ունեցել են ՌԴ-ից այցելած զբոսաշրջիկները՝ շուրջ 47 տոկոսային կետով:

**ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔՆ ԱՃԵՑ**

Հայաստանի պետական պարտքը հունիսի 30-ի դրությամբ կազմում է 4 տրլն 289 մլրդ դրամ, ԱՄՆ դոլարով՝ 11 մլրդ 103 մլն դոլար: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հայտնեց ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի հանձնաժողովի նիստին՝ 2023 թ. պետական բյուջեի առաջին կիսամյակի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկանքի քննարկմանը:

«Դրամային արտահայտությամբ պետական պարտքն առաջին կիսամյակում աճել է 2.5 տոկոսով, իսկ ԱՄՆ դոլարով աճել է 4.4 տոկոսով: Հունիսի 30-ի դրությամբ պետական պարտքը կազմում է 4 տրլն 289 մլրդ դրամ, ԱՄՆ դոլարով՝ 11

մլրդ 103 մլն դոլար»,- ասաց Հովհաննիսյանը:

Նախարարի վստահեցմամբ՝ պարտքի կառավարման հետ կապված ցուցանիշները գտնվում են թիրախային մակարդակում, ներքին պարտքի եւ դրամային պարտքի ցուցանիշները շարունակաբար բարելավվում են:

Անդրադառնալով բյուջեի ցուցանիշներին՝ նախարարը հիշեցրեց, որ փաստացի առաջին կիսամյակի ճշգրտված ծրագրով եկամուտները նախատեսված են եղել 1 տրլն 104 մլրդ դրամ, ծախսերը՝ 1 տրլն 230 մլրդ դրամ, եւ դեֆիցիտը՝ 125 մլրդ դրամ:

«Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ՝ պետական բյուջեի ծախսերի գծով աճ է արձանագրվել եւ ընթացիկ, եւ կապիտալ ծախսերում: Փաստացի 2023-ի առաջին կիսամյակում ունեցել ենք 1 տրլն 160 մլրդ դրամի եկամուտներ եւ ծախել ենք 1 տրլն 26 մլրդ դրամ, ունեցել ենք 134 մլրդ դրամ հավելուրդ»,- ասաց Հովհաննիսյանը:

Բյուջեի եկամուտները 56 մլրդ դրամով գերազանցել են առաջին կիսամյակի ճշտված ծրագիրը՝ պայմանավորված հարկային եկամուտների եւ տուրքերի գերակատարմամբ եւ այլ եկամուտների՝ պլանավորվածից ավելի մուտքերով:

● Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 31 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 38-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

Հայտարարություն՝ անուրիի մասին  
Անուրիի առաջին փուլը կայանալու է 12 հոկտեմբերի 2023 թվականին, ժամը 12:00-ին, ՀՀ, քաղաք Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շէք, 82/31 հասցեում, այսուհետեւ, կայացվող անուրիի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն կայարան, նույն ժամին: Անուրիի ավարտը՝ 29.12.2023թ.-ին:

Աճուրդի կազմակերպիչն է «Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետևյալ լոտի (այսուհետ՝ Լոտ) բաց աճուրդ «հոյակապական» եղանակով:

Անուրդի պայմաններն են.  
Լոս՝ՅՅ, ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Գ.  
Շերամի փողոց, 15 շենք, 22 հասցեում գտնվող  
75,9 ք.մ. բնակարան,

Լուսի մեկնարկային գինը՝ 32400000 (երեսուներկու միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ,  
Միջնորդավճար՝ Լուսի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝ Միջնորդավճար),

Անուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է  
նեկստացնել իշտեւայ փաստաթղթերը.

Ֆիզիկական անձի դեպքում անձը հաստատող փաստաթուղթ է Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ մասնակցի վկայական), որը հաստատելու է նաև նախաձեռնարի մուծման փաստը,

հրավաթանական անձի դեպքում կանոնադրությունը, հրավաթանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի երկրակալության փաստաթղթի համարը հաստատող փաստաթուղթը են լիազորությունները հաստատող փաստաթուղթը. մասնակցի վկայականը:

Անուրոյում հաղթող է ճանաչւում այն անձը, ով աճուրդավարի մուրօրին 3 (երեք) հարվածից հառաջ առաջարկէ և ամենաքաթը գինը: Անուրոյում հաղթող ճանաչված մասնակիցը Լոսի գինը եւ Միջնորդավաճոր վճարող է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում հաշվանցելով մուծված առխավճարի գումարը: Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կապակետելից կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոսի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաքանքներ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխան փոփոխամայլութեամբ:

Աճորտի մասնակցության նախավճարը կազմել է Լուրի ընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, որի վրա ավելի վերջնաժամկետով յուրաքանչյուր աճորտի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկասկիտի՝ հետևյալ հաշվառմանին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեմամարին, իսկ ի՞նչ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել Կանխիկ եղանակով աճորտի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկով: Հարկային գործնական հաճութասանյալի դեպքում աճորտն առողջած մասնակցի կողմից լուրի գնի վաճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխա-մաձայնեցված ժամկետներով:

Լուսին կարող էք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչև առկայի բացմանը՝ Նախորդի օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչև 18:00-ն զանգահարելով ստորև նշված հեռախոսահամարին եւ այցելությունը Նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Անուրիդ կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին՝ ստորև նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծախսերը՝ ինքնուրույն կամ միջոցառման միջոցով, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես նախատեսվում է աճուրդային մասին հրապարակային կապիտալի մասնադրույթ: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող էք զանգահարել ստորել նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորել նշված կայքէջը:

Էլ. փոստ՝ [llcbst@yahoo.com](mailto:llcbst@yahoo.com)  
 հասցե՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40  
 շենք, 82/31  
 հեռ.՝ +374 11 56 45 13  
 կայք՝ [www.llcbst.am](http://www.llcbst.am), [www.borsa.am](http://www.borsa.am)

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

Կորել է Արմենուհի Ռոբերտի Մարգարյանի դիպլոմը՝ տրված 15.08.2015թ., ըստ որի՝ նա ավարտել է «Ինտերլինգվա» [եզվագիտական համալսարանը, եւ նրան շնորհվել է անգլերեն [եզվի թարգմանչի, ուսուցչի որակավորում: Դիպլոմի համար՝ AD 034821:

## ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

# ԳԱՍՏԱԳՐՔԻ ԳՈՒՆԱՇԱՐԸ՝ ԽՆԴՐՈ ԱՌԱՐԿԱ

«Ժողովուրդ» օրաթերթին ԿԳՄՍ նախարարության մամուլի ծառայությունից տեղեկացնում են՝ համացանցում ցրջանառվող լուրերը, թե ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երեսխավորվել է դասագիրք, որի կազմի վրա աղբբջանակահ դրոճի գոյններն են, աղահտեղեկահվոթյուն են եւ աղերս չունեն իրահկանոթյահն հեհ: «Էդիթ Պրինհ» հրահարահկոթյունից նւոն են՝ կազմի գունահարը ոչ մի առնելոթյուն չունի որեւ երկրի դրոճի հեհ, ու մամանցմահ միհոն երբեւ չի դրվել ու չէր էլ կարող դրվել աղողիսիղղարգունակ ճահնաղարհող:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ ԿԳՄՍ նախարարության մամուլի ծառայության տարածած հաղորդագրության մեջ ընդգծվում է, որ «Մայրենի 5» նախկին դասագիրքը (1-ին մաս, 2-րդ մաս, հեղինակներ՝ Դավիթ Գյուրջինյան, Թամարյան Ալեքսանյան, Աշոտ Գալստյան, «Էդիթ Պրինտ» հրատարակություն) առաջին անգամ երաշխավորվել է 2006 թվականին, երկրորդ անգամ՝ 2011 թվականին, 33 կրթության եւ գիտության նախարարության կողմից եւ մինչեւ 2023 թվականը, ըստ գործածության ժամկետների, պարբերաբար վերահրատարակվել է:

«Դասագրքերի շրջանառու հիմնադրամի կայքում dshh.am, հրապարակված են դպրոցներում օգտագործված դասագրքերի էլեկտրոնային տարբերակները, որտեղ նշված դասագրքի կազմը երաշխավորվել է հայկական եռագույնի պատկերով: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ նշված դասագրքի կազմը այլ գույնային պատկերով, երբեմն չի երաշխավորվել դպրոցներում օգտագործելու համար», - նշված է հաղորդագրության մեջ:

Նախարարությունից հորդորում են  
չտրվել անհարկի մանիպուլյացիաներին  
և որեւէ տեղեկատվություն տարածելուց  
առաջ դրա իսկությունը ստուգել պաշ-  
տոնական հարթակներում:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ


«Բիւնժ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ)  
«ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հաշ-  
թակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հողամասկան  
եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Հայ-  
բիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականու-  
թյան իրավունքում պատկանող հետևյալ լոտերը:

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր, Վանաձոր ք.,  
Վարդանանց փողոց, 2-ի հասցեում գտնվող 498,2 քմ  
պահեստ, 1070,6 քմ պահեստ, 1057 քմ. կարբիդի  
արտադրամաս, 2022,5 քմ կարբիդի պահեստ, 587 քմ  
պահեստ, 2343,5 քմ պահեստ, 695,8 քմ արտադրա-  
մաս, 1449,14 քմ տոնտապակա մասնաշենք, 274,7 քմ  
էնթալկայան, 31,7 քմ գետնահոր, 212 քմ էնթալկա-  
յան, 31,7 քմ գետնահոր, 2072,1 քմ արտադրամաս,  
62 քմ օժանդակ, 224 քմ բեռնաթափման հարթակ,  
139 քմ կենցարային մասնաշենք, 8,8 քմ արտադրա-  
մաս, 261,1 քմ արհեստանոց, 908,7 քմ արտադրա-  
մաս, 440,8 քմ ծածկ, 4176 քմ հարթակ, 684 քմ ծածկ,  
2028 քմ ծածկ, 120 քմ հարթակ, 159,12 քմ ծածկ եւ  
8,04724 հա հողամաս: Լոռուի մեկնարկային գիծը՝  
805000000 ՀՀ դրամ:

- Արմավիրի մարզ, համայնք Շահումյանի թ/Ֆ, 1-ին փողոց, 70 հասցեում գտնվող 486,3 քմ բնակելի տուն, 3,4 քմ զուգարան, 107,9 քմ անասնաշենք, 18,9 քմթռչնանոց, 17,4 քմ/38,2 խմ/ պարիսպ եւ 0,1332 հա իրականա: Լոտի մեկնարկային գինը՝ 32600000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Աջափնյակ, Մազմանյան փողոց, 8  
շենք, 20-21 հասցեում գտնվող 170,4 քմ բնակարան:  
Լրտի մեկնադրական գինը՝ 65600000 ՀՀ դրամ:

- ք. Երևան, Շենգավիթ վարչ. շրջան, Գ. Նժդեհի 6 շենք, 19 հասցեում գտնվող 74,74 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 40000000 ՀՀ դրամ:



«Համացանցում տարածված «Մայրենի-5» դասագիրքը որոնե առնչություն չունի նոր հաստատված դասագրքերի հետ: «Մայրենի» առարկան տվյալ գրքով հանրակրթական դպրոցներում դասավանդվել է 2006 թվականից, իսկ շրջանառվող կազմով տարբերակը տպագրվել է սահմանափակ քանակով կոմերցիոն նպատակով վերատպվել է 2019 թվականին, երբ, առաջնորդվելով աշակերտների հարմարաբանության սկզբունքով, դասագրքերը կիսվել են 2 մասի: Ավելին

տվյալ դասագիրքը այս տարի արդեն դուրս է եկել շրջանառությունից»,-նշված է «Էդիթ Պրինտ» հրատարակչություն պարզաբանման մեջ:

Ավելի վաղ սոցիալական ցանցերի հայկական տիրույթում օգտատերերը տարածում են «Մայրենի 5»-ի երկու դասագիրք, որոնցից մեկի վրա պատկերված է հայկական դրոշ, մյուսի վրա նույն տեղում ադրբեջանական դրոշի գույներն են: Թեմային անդրադարձել է նաեւ մամուլը:

հետո մենք աշխատանքային օրվա ընթացքում: Նա-  
խաճարվոր էլքթրակա է վերադարձնում, եթե աճուրդը  
աշխատվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճա-  
նաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագ-  
րությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա  
ևս կորցնում է իր ժուճն Նախավճարը: Եթե Վաճա-  
կերպիճը հրաժարվում է ստորագրել արձանագրու-  
թյունը, ապա ևս պարտավոր է աճուրդում հաղթող  
ճանաչված անձին վերադարձնել Նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակցների կրուստների եւ վկաների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոսերն ուսումնասիրելու ցանկություն հայտնառած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչև աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, Ժ. 10:00-ից մինչև 18:00-ն, այցելել վերջ նշված հասցեներով և ծանուցանալ լուրերի հետ՝ պետությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի և Բորսայի հետ: Հարկա՝ չի գործադարձ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լուրի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ գոյիսմամբայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մասնավոր հրապարակվելու միջոցով: Աճուրդի լուրի անցկացման կազմակերպչին, լուրերի ամբողջական ցանկին կարող էք ծանուցանալ և անվճար տեղափախվածություններ ցանկում, դիմելով Կազմակերպչին և Բորսային՝ ք. Երևան, Մայաք-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկություններ համար կարող էք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել [www.lcbst.am](http://www.lcbst.am), [www.borsa.am](http://www.borsa.am) կայքեր:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

# ԻՆՉՈ՞Վ Է ԶԲԱՂՎՈՒՄ «ՄԵՆՔ»-Ը

44-օրյա լուստերազմի ժամանակ մի խումբ ինֆլուենսերների նախաձեռնությամբ ձեռավորվեցին «Մեդիա գրոհայինների բանակ» եւ «ՄԵՆՔ» սոցիալական խմբերը, որոնք ներկա դրանք էլ ակտիվ գործունեություն են իրականացնում:

«ՄԵՆՔ» ֆեյսբուքյան խումբը ստեղծվել է 2020 թվականի սեպտեմբերի 28-ին: Մինչեւ արցախյան 44-օրյա պատերազմի ավարտը խմբի անդամները պայքարում էին ապատեղեկատվության, կեղծ էջերի, ոչ հավաստի լուրերի դեմ: Պատերազմի ավարտից հետո խմբի անդամները սկսեցին գումար նվիրաբերել 44-օրյա պատերազմի հետեւանքով վիրավորված զինվորներին նրանց ընտանիքներին օգնելու նպատակով:

Ներկա պահին Արցախում ոչ միայն պատերազմ է, այլ նաեւ կոտորած. այս անգամ էլ «ՄԵՆՔ»-ը հանդես եկավ նոր նախաձեռնությամբ: Ինֆլուենսերներ Ռուբեն Եսայանը եւ Սեյրան Յայլախանյանը միասին հայտարարեցին. «Արցախից Հայաստան բնակչության հավանական տարահանման դեպքում, երբ արդեն մարդիկ կլինեն անվտանգ գոտում, մենք պատրաստ ենք մեր գործիքակազմի ողջ ներուժով համախմբել մարդկանց ու իրականացնել մեծ արշավներ՝ ուղղված ֆինանսական հավաքագրումների, ու փորձել ապահովել տեղափոխվածների նվազագույն կարիքները՝ սնունդից մինչեւ գումար, բնակության վայր եւ մնացյալը:

Ակնկալում ենք բոլոր ներսում ու դրսում ապրող հայերի մեծ պատրաստակամությունը»:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել ինֆլուենսեր Ռուբեն Եսայանի հետ՝ հասկանալու համար, թե ինչ փուլում է նրանց նախաձեռնությունը: «Դեռեւս մեկնարկ չենք տվել, քանի որ դեռ չպարզաբանված հարցեր կան»,-ասաց Ռուբենը:

Խնդիրը նաեւ այն է, որ անհայտ ծագման շատ էջեր, օգտվելով ստեղծված իրավիճակից, կեղծ դրամահավաքներ են իրականացնում, եւ դրանք լուրջ խոչընդոտ են հանդիսանում ինչպես պետության, այնպես էլ «ՄԵՆՔ»-ի նման խմբերի համար: «Ժողովուրդ» օրաթեր-



թը խոսեց նաեւ խմբի համակարգող Սեյրան Յայլախանյանի հետ՝ հասկանալու իրենց հետագա անելիքները, քանի որ «ՄԵՆՔ»-ը ունի պատրաստակամ շատ մեծ լսարան:

««ՄԵՆՔ»-ը այս պահին ոչ մի ֆինանսական հավաքագրում չի իրականացնում. մինչեւ դա չհամաձայնեցնենք պետության հետ, չենք անի: Եթե կարիքը լինի, իրենք մեզ կտեղեկացնեն: Կարծում եմ այս պահին կարիքը չկա դրամահավաքի եւ այլնի, առավել եւս՝ նման իրավիճակում, երբ շատ դժվար է վերահսկել, թե ով ինչի համար է հավաքում, եւ ուր են ուղղվում այդ հավաքված միջոցները»:

Պատերազմի օրերին «Մենք»-ի մեդիաբանակը համալրվեց նորանոր անդամներով: Նրանք հիմնականում այն մարդիկ էին, որոնք համակարգչի առաջ նստած աշխատում էին եւ ուզում էին ինչ-

որ մի ձեւ օգնել կռվող զինվորին եւ ամուր պահել տեղեկատվական դաշտը: Նրանց պայքարը ադրբեջանական ֆեյք հաշիվների, կեղծ հրապարակումների ու տեսանյութերի դեմ էր, ռիփորթում էին, եւ եթե հնարավոր էր, փորձում էին ստուգել այս կամ այն տեղեկությունը: Այդ օրերին այս խումբը եւ խմբի անդամները բավականին համակարգված էին աշխատում, գտնում էին կեղծ ու ոչ հավաստի տեղեկությունները եւ հրահանգում խմբի անդամներին «կռիվ» սկսել եւ կանխել տարածումը: Պատերազմի ավարտից հետո խմբի անդամները դադար տվեցին. թեեւ միտք է եղել խումբը փակել, սակայն խմբի շատ անդամներ հորդորել են խմբի հիմնադրին եւ խնդրել պահել խումբը եւ շարունակել պատերազմի հետեւանքների հաղթահարման ուղղությամբ աշխատել:

ՕՅԵԼՅԱ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## ՍՊՈՐՏ

### ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳԻՆԸ

Հայաստանի հավաքականի եւ Մոսկվայի «Լոկոմոտիվի» պաշտպան Նաիր Տիկնիզյանը մեկնաբանել է «Զենիթի» դեմ ՌԴ-ի 9-րդ տուրի խաղում կարմիր քարտ ստանալը:

«Հիմա կրքերը հանդարտվել են: Իհարկե, ցավալի է, քանի որ ես հանդիպում եմ բաց թողնելու:

Ինչ կարող եմ անել. սա ֆուտբոլ է: Եթե սա է հաղթանակի գինը, ապա ես պատրաստ եմ վճարել», - Կեռուստյանի հետ զրույցում ասել է Նաիր Տիկնիզյանը: Հայաստանի հավաքականի պաշտպանը «Զենիթի» դեմ խաղի վերջնամասում հաղթական գոլ էր խփել եւ մարզաշապիկը հանելու համար դեղին քարտ էր ստացել, իսկ ավելացված ժամանակի 7-րդ րոպեին երկրորդ դեղին քարտով հեռացվել էր խաղադաշտից:

### ՊԱՏԲԱՍՏ Է ՎՃԱՐԵԼ

Գերմանիայի չեմպիոն «Բավարիան» մտադիր է ձեռք բերել Իսպանիայի չեմպիոն «Բարսելոնայի» իսպանացի կիսապաշտպան Պեդրիին:

Մյունխենյան ակումբը պատրաստ է 20-ամյա ֆուտբոլիստի տրանսֆերի համար վճարել 120 միլիոն եվրո, ինչը կլինի ռեկորդային «Բավարիայի» համար. հաղորդում է Todofichajes-ը:

Պեդրին 2019 թվականին «Լաս Պալմասից» 17,5 միլիոն եվրոյով է տեղափոխվել «Բարսելոնա», որի հետ նրա պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2026թ. հունիս:

Transfermarkt-ը Պեդրիի տրանսֆերային արժեքը գնահատում է 100 միլիոն եվրո:

### ՎԻՃԵԼ Է ՄԱՐԶՉԻ ՀԵՏ

Իտալիայի չեմպիոն «Նապոլի» նիգերիացի հարձակվող Վիկտոր Օսիմենը վիճել է Նեապոլյան թիմի ֆրանսիացի գլխավոր մարզիչ Ռուդի Գարսիայի հետ «Բոլոնիայի» դեմ Ա Սերիայի 5-րդ տուրի խաղում փոխարինվելիս. հաղորդում է Football Italia-ն: Օսիմենը Նապոլյանցի հարցրել է մարզչին, թե ինչու նա չի խաղում երկու հարձակվողներով:

«Նապոլին» «Բոլոնիայի» հետ հանդիպումն ավարտել էր ոչ-ոքի՝ 0:0: «Նապոլին» 8 միավորով 7-րդ տեղում է:

### ՌԵԿՈՐԴ Է ՄԱՀՄԱՆԵԼ

Անգլիայի առաջնության 6-րդ տուրում «Նյուքասլ Յունայթեդը» 8:0 հաշվով հաղթել էր «Շեֆիլդ Յունայթեդին»:

Անգլիայի Պրեմիեր լիգայի պատմության մեջ առաջին անգամ 8 տարբեր խաղացողներ մեկ խաղում գրավեցին մրցակցի դարպասը. հաղորդում է Opta Sport-ը: Այդքի էին ընկել Շոն Լոնգսթաֆը, Դեն Բյորնը, Սվեն Բոթմանը, Կալում Ուիլսոնը, Էլթոնի Գորդոնը, Միգել Ալմիրոնը, Բրունո Գիմարայշը եւ Ալեքսանդր Իսակը: 8:0 հաշիվը «Նյուքասլ Յունայթեդի» ռեկորդի կրկնությունն է Պրեմիեր լիգայում: 1999 թվականին «Նյուքասլ Յունայթեդը» 8:0 հաշվով հաղթել էր «Շեֆիլդ Ռեյնսդեյլին»:

## ԳՐԱՌՈՒՄ

# ՄԱՐԴԻԿ ՓՈՐՁԵԼ ԵՆ ԲԱԺԱՆԵԼ

«Մեր սահմանները վերաճելուը կառավարությունները եւ բարբարոսների հրոսակախմբերի ներխուժումները մոռ չեն հայ ժողովրդի համար: Մարդիկ հաճախ փորձել են բաժանել աշխարհի ամենահին քրիստոնյա ազգը դրսից ու ներսից..., բայց մեզնիք երբեք հաջողության չեն հասնի», - գրել է Լուս Անջելեսում բնակվող բժիշկ եւ «Խոստումը» ֆիլմի ռեժիսոր Էրիկ Էսթայիլյանն «Ինսագրամ» սոցիալական ցանցի իր էջում:

Պրոդյուսերը հրապարակել է լուսանկար, որում երեւում է Մասիսն ու Սիսը: Հրապարակմանը կից նա նշել է. «Խնդրում ենք կարդալ եւ տարածել: Մեր նախորդ գրառումներն ու Stories-ներն ամփոփում են այն, ինչ կատարվում է հենց

հիմա: Ես նկարագրել եմ տարբեր կազմակերպություններ, որոնց կարող եք նաեւ աջակցել մարդասիրական օգնության ու այլ տեսակի աջակցության համար: Այս վերջին լուսանկարն արվել է աշխարհի ամենասուրբ վայրերից մեկում: Նայեք դրան եւ կողմնորոշվեք ինքներդ: Մեր սահմանները վերաճելուը կառավարությունները եւ բարբարոսների հրոսակախմբերի ներխուժումները նոր չեն հայ ժողովրդի համար: Մարդիկ հաճախ փորձել են բաժանել աշխարհի ամենահին քրիստոնյա ազգը դրսից ու ներսից..., բայց նրանք երբեք հաջողության չեն հասնի: Մեր եկեղեցին մեզ փոխանցվեց ժառանգաբար առաքյալներից, որոնք նախատակվեցին իրենց հավատքի համար, Սուրբ Գրիգոր Լուսավորիչը շարունակեց առաքելական ավանդույթը եւ հիմնեց Հայ առաքելա-

կան եկեղեցին: Վերջերս ես խոր քննարկումների մեջ էի եկեղեցու առաջնորդների հետ ամբողջ աշխարհից: Նրանց հավատը չի սասանվել, ոչ էլ իմը: Այն դարձել է միայն ավելի ուժեղ, ավելի մեծ նպատակասլացությամբ, եւ մեր պարտականությունն է այն փոխանցել հաջորդ սերնդին: Կարդացե՛ք Հայտնություն 21.4-ը, ինչպես ես արեցի այս կիրակի առավոտյան. «Աստված կարքի բոլոր արցունքները նրանց աչքերից: Եվ այլեւս մահ չի լինի, ո՛չ վիշտ, ո՛չ աղաղակ, եւ այլեւս ցավ չի լինի, քանի որ նախկինն անցել է»:

Ես շարունակելու եմ իմ ուժերի ներածին չափով ամեն ինչ անել հայ ժողովրդին ոգեշնչելու համար, աշխատել նշանակալի գործընկերների հետ, որոնք մեզ հետ են, եւ անտեսել մյուսներին, որոնք կանգնած են մեր ճանապարհին»:

● Սեպտեմբերի 27-ին Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնում տեղի կունենա «Լոռեցի Սաքոն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:





ԱԿՏԵՐ

**ՀԱՐՑ. Վարչական ակտերը ո՞ր դեպքում եւ ի՞նչ ժամկէսներում են ներկայացվում հարկադիր կա-  
սարման:**

Էդուարդ Մանուկյան (28 տարեկան)



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Դրամական պահանջները ներկա-  
յացվում են հարկադիր կատարման «Վարչարարու-  
թյան հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ  
օրենքի 88-րդ հոդվածին համապատասխան վարչա-  
կան ակտն անբողոքարկելի դառնալուց հետո՝ եռամս-  
յա ժամկետում, իսկ վարչական ակտի կատարումը հե-  
տաձգելու կամ տարաժամկետելու դեպքում՝ հետաձ-  
գելու կամ տարաժամկետելու ժամկետի ավարտից հե-  
տո՝ եռամսյա ժամկետում:

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վա-  
րույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝  
վարչական ակտը, որպէս ընդհանուր կանոն, դառնում  
է անբողոքարկելի այն ուժի մէջ մտնելուց հետո՝ 2  
ամսվա ընթացքում, վարչական բողոք չներկայացնե-  
լու դեպքում:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

**«ԺՈՂՈՎՈՒՐԳ».** «Վարչարարության հիմունք-  
ների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 72-րդ  
հոդվածի համաձայն՝ վարչական ակտը դառնում է ան-  
բողոքարկելի այն ուժի մէջ մտնելուց հետո՝ 2 ամսվա  
ընթացքում, վարչական բողոք չներկայացնելու դեպ-  
քում:

ԳՈՐԾԱՐՔ

**ՀԱՐՑ. Ինչպէ՞ս կարող են մասնավորեցման գոր-  
ծարհները անվավեր ճանաչվել:**

Աշոտ Եղյան (35 տարեկան)



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Մասնավորեցման գործարքները  
դատական կարգով անվավեր են ճանաչվում, եթե  
մասնավորեցված գույքը ենթակա չէ մասնավորեց-  
ման, կամ մասնավորեցման հետեւանքով պետական  
սեփականություն ձեռք բերած անձն իրավունք չունի  
մասնակցելու մասնավորեցմանը: Վերջին դեպքում  
գործարքը կարող է անվավեր ճանաչվել միայն այդ  
անձին վերաբերող հարցով:

Պետական գույքի կառավարման կոմիտե

**«ԺՈՂՈՎՈՒՐԳ».** Մասնավորեցման համար  
վճարումները, այդ թվում՝ հերթական վճարումը, ինչ-  
պէս նաեւ մասնավորեցման գործարքի այլ պայման-  
ները չկատարելու դեպքում լիազորված պետական  
մարմինը հայց է ներկայացնում դատարան գնորդին  
սեփականության իրավունքով պատկանող գույքի  
վրա բռնագանձում տարածելու մասին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Ստեփանակերտի Վերածննդի հրապարակից մարդիկ  
մասսայաբար տեղափոխվում են Հայաստանի Հանրապե-  
տություն:

Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրառում է կատարել  
արցախցի լուսանկարիչ Դավիթ Ղահրամանյանը եւ գրառ-  
մանը կից տեղադրել լուսանկարներ:

«Հաշված օրերի ընթացքում պատմության մեջ առաջին  
անգամ Արցախն ամբողջությամբ հայաթափված կլինի», -  
գրել է նա:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը  
Բաժանորդագրվելու  
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ  
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայկոստ» ՊԲԲԸ  
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ  
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել  
«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23**  
հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառ-  
նանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ

հայկական տպագիր մամուլից


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու  
համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ  
ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի  
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ \_\_\_\_\_  
Ազգանուն՝ \_\_\_\_\_  
Առաքման հասցե՝ \_\_\_\_\_  
Բջջային եւ/կամ  
քաղաքային հեռախոս՝ \_\_\_\_\_

Հեռ.՝ (060) 490049  
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



	Շիրակ	+ 4 + 9 +18 + 24
	Կոտայքի լեռներ	+ 4 + 7 +17 + 23
	Կոտայքի նախալեռներ	+11 + 13 +22 + 24
	Գեղարքունիք	+ 3 + 8 +14 + 18
	Լոռի	+ 5 + 11 +14 + 18
	Տավուշ	+ 8 + 12 +19 + 22
	Արագածոտնի լեռներ	+ 3 + 6 +14 + 17
	Արագածոտնի նախալեռներ	+ 9 + 14 +20 + 27

	Արարատ	+13 + 16 +25 + 27
	Արմավիր	+12 + 14 +25 + 27
	Վայոց ձորի լեռներ	+ 3 + 7 +18 + 21
	Վայոց ձորի նախալեռներ	+ 7 + 11 +12 + 17
	Սյունիքի հովիտներ	+14 + 17 +18 + 24
	Սյունիքի նախալեռներ	+ 7 + 11 +12 + 17
	ԼՂՀ	+13 + 17 +18 + 23
	Երեւան	+14 + 16 +28 + 30

Լրատվական գործունեություն իրականացնող՝  
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ  
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22<sup>ա</sup>/3, հեռ՝ **010 54-64-23**  
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086  
տրված է 24.11.2010  
Ստորագրված է տպագրության **25.9.2023**

Հասցե՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդգես, Վ. Քանդավորյան 2021

Գլխավոր խմբագիր՝  
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում  
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ  
չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային  
հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը  
պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս  
կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել  
հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք  
կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: